

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/3

29 մայիսի 2013թ.

Քննարկվեց Ա/Ձ Հարություն Հարությունանի 15.04.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 05.04.2013 թ-ի թիվ 1411154 վարչական ակտի դեմ:

Ա/Ձ Հարություն Հարությունյանի բողոքում մասնավորապես նշված է.

2013 թ-ի ապրիլի 04-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցների կողմից կազմվել է թիվ 1411154 արձանագրությունն այն մասին, որ Ա/Ձ Հարություն Հարությունյանը 2008 թվականի նոյեմբեր ամսից Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 22 հասցեում իրականացրել է ստոմատոլոգիական ծառայություն և այդ հասցեով 24.09.2008 թ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստացել է թերապևտիկ ստոմատոլոգիական, վիրաբուժական ստոմատոլոգիական ծառայություն մատուցելու լիցենզիա: Այնուհետև 2010 թ-ի մայիս ամսին Ա/Ձ-ն գործունեությունը տեղափոխել է Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 32 հասցե, սակայն այդ հասցեի համար չի ստացել համապատասխան թույլտվություն՝ լիցենզիա, ստոմատոլոգիական ծառայություն մատուցելու համար (խախտվել է <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի 43 հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները):

Վերոգրյալ արձանագրության հիման վրա 2013 թ-ի ապրիլի 5-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27-րդ բաժնի պետը կայացրել է հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1411154 վարչական ակտը, որով Ա/Ձ Հարություն Հարությունյանին առաջադրվել է 500.000 դրամ գումարի չափով տուգանք և 50.000 դրամ գումարի չափով վնասի հատուցման պարտավորություն:

Գտնում եմ, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 2013 թ-ի ապրիլի 05-ի թիվ 1411154 վարչական ակտը ենթակա է վերացման՝ հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ.

Ա/Ձ Հարություն Հարությունյանին վերագրվող վարչական իրավախախտումը վերջինիս կողմից առանց համապատասխան թույլտվության՝ լիցենզիայի, ստոմատոլոգիական ծառայություն մատուցելն է: Սակայն վարչական ակտում՝ որպես Ա/Ձ Հարություն Հարությունյանի կողմից խախտված իրավանորմ, նշված է <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետը: <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետը 3-րդ ենթակետ չունի, իսկ 3-րդ կետը սույն վարչական գործի հանգամանքների հետ որևէ կապ չունի և վերաբերելի չէ: Մասնավորապես, <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի աղյուսակում չնշված գործունեության տեսակներով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք իրավունք ունեն զբաղվել առանց սահմանափակման, եթե տվյալ գործունեության տեսակով զբաղվելն օրենքով արգելված չէ: Ա/Ձ Հարություն Հարությունյանը վերոնշյալ աղյուսակում չնշված գործունեությամբ երբևէ չի զբաղվել:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտը պետք է համապատասխանի օրենսդրական տեխնիկայի կանոններին:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Առանց համապատասխան թույլտվության՝ լիցենզիայի, ստոմատոլոգիական ծառայություն մատուցելը վերը նշված իրավանորմի հետ կապելը օրենքի սխալ կիրառման և սխալ մեկնաբանման արդյունք է: Վարչական ակտը կազմելիս օրենսդրական տեխնիկայի կանոնների չպահպանումը ևս օրենքի խախտման արդյունք է, որը հիմք է հանդիսանում թիվ 1411154 վարչական ակտն անվավեր ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Հարություն Հարությունյանը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27-րդ բաժնի պետի կողմից 2013 թ-ի ապրիլի 5-ին կայացված թիվ 1411154 վարչական ակտը վերացնել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ՕՀՎ աշխատակիցների ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27-րդ բաժնի պետի կողմից 2013 թ-ի ապրիլի 5-ին կայացված թիվ 1411154 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է.

Ա/Ձ Հարություն Հարությունյանը գրանցված Վանաձորի ՏՀՏ-ում 2008 թվականի նոյեմբեր ամսից Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 22 հասցեում իրականացրել է ստոմատոլոգիական ծառայություն և այդ հասցեով 24.09.2008 թ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստացել է թերապևտիկ ստոմատոլոգիական, վիրաբուժական ստոմատոլոգիական ծառայություն մատուցելու թիվ Ա-XX-000299 լիցենզիա: Այնուհետև 2010 թ-ի մայիս ամսին Ա/Ձ-ն գործունեությունը տեղափոխել է Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 32 հասցե, սակայն այդ հասցեի համար չի ստացել համապատասխան թույլտվություն՝ լիցենզիա, ստոմատոլոգիական ծառայություն մատուցելու համար: Ա/Ձ Հարություն Հարությունյանի կողմից Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 32 հասցեում առանց համապատասխան թույլտվության՝ լիցենզիայի ստոմատոլոգիական ծառայություն իրականացնելու ժամանակահատվածի իրացման շրջանառությունը կազմել է 19054955 դրամ, որի վերաբերյալ հարկային տեսչություն ներկայացրել է համապատասխան հաշվետվություններ: Արդյունքում ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով վարչական ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել 550.000 դրամ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Հարություն Հարությունյանն 2008 թ-ի նոյեմբեր ամսից Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 22 հասցեում զբաղվել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ, այն է՝ բժշկական օգնության և սպասարկման իրականացում, որի համար համաձայն «Լիզենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի, նախատեսված է բարդ ընթացակարգով տրվող լիցենզիա, ինչպես նաև սահմանված են գործունեության իրականացման վայրի նկատմամբ հատուկ պահանջներ: Հետևապես, 2010 թ-ի մայիս ամսին, երբ գործունեությունը տեղափոխվել է Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 32 հասցե, այդ հասցեի համար Ա/Ձ Հարություն Հարությունյանը պետք է ունենար հատուկ պահանջները բավարարող համապատասխան փաստաթղթեր: Մասնավորապես, համաձայն «Լիզենզավորման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի. «Եթե բարդ լիցենզիա ստացած լիցենզավորված անձին գործունեության իրականացման լիցենզիա տալու համար օրենքով կամ լիցենզավորման կարգով գործունեության իրականացման վայրի նկատմամբ հատուկ պահանջներ են սահմանվել, ապա լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու վայրը կարող է փոփոխվել, կամ տվյալ լիցենզավորված անձն այդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով նոր վայրում գործունեություն կարող է իրականացնել միայն գործունեության վայրի վերաբերյալ սահմանված հատուկ պահանջները բավարարող օրենքով կամ լիցենզավորված կարգով նախատեսված փաստաթղթերի ներկայացման դեպքում:

Սույն մասի պահանջների խախտմամբ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելը համարվում է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացում»:

Տվյալ դեպքում Ա/Ձ Հարություն Հարությունյանը չի ներկայացրել գործունեության վայրի, այն է՝ Վանաձոր քաղաքի Դեմիրճյան 32 հասցեի վերաբերյալ սահմանված հատուկ պահանջները բավարարող փաստաթղթեր, որի հետևանքով Ա/Ձ Հարություն Հարությունյանի 2010 թ-ի մայիս ամսից իրականացրած գործունեությունը համարվել է որպես առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացում: Իսկ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով սահմանված լիցենզավորման

ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: ... Սույն հոդվածի առաջին (եթե իրականացվող գործունեությունն օրենքով ենթակա է լիցենզավորման) և երկրորդ պարբերություններում նշված խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտումներ կատարած անձանցից գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում>:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 2013 թվականի ապրիլի 5-ի թիվ 1411154 վարչական ակտում <Լիզենզավորման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքին կատարված հղման հետ կապված առկա է տեխնիկական վրիպակ: Մասնավորապես, վարչական ակտում նշված. <(խախտվել է <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները)>, անհրաժեշտ է կարդալ որպես. <(խախտվել է <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջները)>:

Հանձնաժողովի 07.05.2013թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Վարչական ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԱՐՄԵՂՅԱՆ